ՊՈԼՍԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ այցելեց պոլսահայ ուխտավորների մի մեծ խումբ: Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում պոլսահայ ուխտավորների խմբին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ընդունելության ընթացքում խմբի անունից Վեհափառ Հայրապետին ուղղված ջերմ և սրտառուչ խոսք ասաց պրն. Էդվարդ Թովմասյանը.

«Կուգանք պատմական քաղաք Պոլիսեն, ուր այս տարի Թուրքիո հայոց Պատրիարքության հիմնարկության 525-րդ տարեդարձը տոնեցինք: Այդ օր տոնեցինք նաև մեր բոլորին սիրելի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հոր գահակալության 25-ամյակը:

Եկանք ուրիշ պատմական քաղաք մը, ուրիշ սրբավայր մը հազար-հազարամյա. եկանք մեր ուխտը կատարելու: Մեզմե ոմանք քանի անգամներ կուգան, այսօր դարձյալ եկան իրենց ուխտը նորոգելու. եկանք Իշման Սուրբ Սեղանին առջև մեր հավատքի, հույսի մոմը վառելու, շրթունք դպցնելու այն սուրբ քարերուն, որ ամեն հայու երազն է:

Սիրելի Վեհափառ Տեր, գիտենք, որ Ձեր մանկության որոշ մեկ շրջանը ապրած եք Պոլսո Կետիկ փաշայի թաղամասին մեջ, աշակերտած եք Մեսրոպյան վարժարանը: Ս. Հովհաննես եկեղեցին ինչ-ինչ հիշատակներ ունի Ձեր մոտ: Այդ 137 տարվա եկեղեցին այս տարի նորոգվեցավ և օծվեցավ շինարար և գրասեր Ամենապատիվ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի ձեռքով: Ճամբա չելած գացի, մոմ վառեցի Ս. Հովհաննես եկեղեցվո մեջ՝ աղոթելով ու մաղթելով Ձեզ երկար կյանք, առողջություն ու Ձեր գործոց հաջողություն:

Դուք եղաք վերջին երեսուն տարիներուն մեջ շինարար և հաշտարար գործունեությամբ իսկական հովվապետ մը, և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը այսօր կապրի կատարյալ և ծաղկյալ օրերը:

Մենք մոտեն կհետևենք և գիտենք, որ Դուք կքարոզեք ու կաշխատեք ժողովուրդներու բարեկամության, ընդհանուր զինաթափության, սպառազինություններու դադրեցումին համար:

Հազար սեր, հազար ողջույն Ձեր գործին:

Մենք Ձեր շունչով ազգային, կրոնական ու մարդու եղբայրության ճշմարտությունները կսորվինք: Եվ կհավատանք, որ այս լույսի ճամբով մենք պիտի կերտենք մեր վաղվան ապագան, պիտի կազմենք ամուր միասնականություն, միություն, եղբայրություն ու խաղաղ, արդար աշխարհ մը:

Ուրախություն բերինք, բարև բերինք վարժապետյաններու, դուրյաններու, կոլոտներու ապրած քաղաքեն:

Թրքահայերս կգտնվինք մեր Հոգևոր Հոր՝ Շնորհք Պատրիարքի հայրական հոգածության տակ, որ խորապես կապրի ու

Վեհափառ Հայրապետը Լեռնային Արցախի ուխտավորների խմբի հետ

ապրեցնելու կաշխատի իր մեծ անցյալը:

Իսթանպուլահայերս համակրանքով ու սիրո կապերով կապված ենք Սուրբ Էջմիածնին:

Հազար սեր, հազար ողջույն մեր քույրերեն ու եղբայրներեն:

Հազար սեր, հազար ողջույն մինչև իսկ չծնված հոգիներեն»:

Այնուհետև պոլսահայ ուխտավորների խմբին ուղղված իր քաջալերանքի, ոգևորության և օրհնության խոսքն ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության ավարտին պոլսահայ ուխտավորների խումբը լուսանկարվեց Վեհարանի առջև՝ իրենց մեջ առած բոլորի համար այնքան թանկ ու սիրելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Պոլսահայ ուխտավորների խումբը Մայր Աթոռից մեկնեց անմոռաց տպավորություններով և բարձր տրամադրությամբ:

ԹՂԹԱԿԻՑ